





# ԲԵՐԱՅԻ ԳԻՉԵՐՆԵՐԸ

ԱՆԿՈՒՑԻ ԱՆՑՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

A  $\frac{I}{13891}$



ԳԻՆ 1 ՂՐՈՒՇ

Կ. ՊՈՒԼԻՍ  
Տպ. ՎԱՂԻՆԱԿ Ս. ԲԻՐԱՏ

1914

ՀԱՅ. ՍՊԻ

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս օրերս որ գործերը քիչ թէ շատ անցուկ վիճակ մը ունին, մասնաւորապէս մեր պաշտօնեայ երիտասարդները արտունջ մը ունին, իրենց շրթներուն վրայ, լրոնք ընդհանրապէս սա կերպով կ'արտայայտուին. «Եղբայր այն ինչ օրեր էր, շարաթական 150—200 դրչ. ինչէնք հաւնեք, սանկ սնգամ մը Բերա ելլալնուս 2—3 ոսկի ստեղծն խօսքը կ'ըլլար, բայց դարձեալ յանցանքը մեր քովն է եղեր, անգամ մը որ գործերը բացուին այնպէս շոտյօրէն դրամ վաանելու չէ, ալ խելքերնիս գլուխնիս եկաւ»:

Բայց սիրելի ընկերներս, Ձեզի կը վստահեցնեմ ինչպէս որ գինեմոլութիւնը և խաղամոլութիւնը մէյ մէկ ակտեր են, այս աշխարհիկ կեանքն ալ նոյն չափով կ'ործանիչ ակտ մըն է որ ինչպէս հիմա պիտի տեսնէք, սա պարզ իրականութենէն, որ մարդս գրպանը դրամ իսկ չունենայ ամէն վտանգ աչք առնելով, իր շոտյօրերը վերյուշել կ'ուզէ:

Հ. ՄՕԶՍՐ

# ԲԵՐԱՅԻ ԳԻՇԵՐՆԵՐԸ

ԱՆԿՈՒՏԻ ԱՆՅՆԵԼՈՒ

ԱՐՈՒԵՍՏԸ

ԸՇՇՇՇՇ

**20**րդ դարու ժամանակակից օրերուս մէջն ենք, գործի և դրամի ճրագով փնտռուած ատենները: Փիլէիս չորս՝ տափաստիս երկու՝ և ժաքէթիս երեքուկէս գրողանները մանրաղնին կերպով խուզարկելէ յետոյ, լաւ մը վստահութիւն գոյացուցի որ ոչ ոք կը գանտին անոնց մէջ: Եւ էք երբեմն տեսակէն շի՛ք մը հագուելով՝ փողոց կելլեմ:

— Բարեւ Մ. Գեղամ, կը բարեւէ իմ վաղեմի հովարեսս բարեկամներէս մէկը, որ ճամբան կը հանգիստիմ: Կը մտածեմ թէ կուտ կը բռնէ:

— Բարեւ Մ. Մինան, կ'ըսեմ, չփաղաքչական քովիծաղով մը, ի՞նչպէս ես նայինք:

— Է՛, աղէկ, նախ ծխախոտ մը տուր նայինք...

— Հիմա հարիւրնոց պամօրան նետեցի կը պատասխանեմ, զարմացած և ախուր դէմքով մը:

— Ի՛նչ, պամօրա՛, ուրեմն ո՞ր վաճառատուներ կ'աշխատես:

— Իսկ դո՞ւ :

— Ես երկու ամիս է որ պարապ եմ :

— Ես ալ կէս աւելի :

— Ո՞ւր եմն :

— Ուրեմն երեսուն փարանոց ծխախոտը որ պահուած ատփին մէջ դրած կը խմէի, քիչ առաջ ան ալ լինցաւ :

— Չրսե՞ս որ երկուքս ալ անկուտի ենք ըսաւ քարեկամս, արդի բնական զոհունակութեամբ մը :

— Լաւ, ո՞ւր ասանկ :

— Ես ալ չ'գիտեմ :

— Եկուք Բերա անցնինք . . . :

— Բերա՞ . . . Լաւ, բայց կամուրջին դրամը, գոնէ առնուազն քառասուն փարա մը պէտք է, Բերա հովարսանա պտտելու համար :

— Եկուք եղբայր, հարկաւ մէկէն կը զըտնենք կ'ըսեմ ընկերոջս թեւէն քաշելով :

Քիչ մը երթալէ յետոյ Պետրոսը կը տեսնենք, աղատ հազուստներով, նոյն նահաքետեան բալքո մը կռնակը, ձեռքերը զրպանը, դուխն չ'ալ վերարկուին մէջ կ'ըկած, ճամբան՝ քայիլէ աւելի կը սլաքակար կարծես :

Գլուխս անդին կը դառցնեմ չը տեսնել զայու համար, որովհետեւ բառին բուն նշանակութեամբ անկուտիութիւնը վրայէն կը վազէր : Ընկերս Մինաս զայն նշմարելով կը մտանայ :

— Բարեւ Պետրոս, ո՞ւր այսպէս մտադրադ :

— Սո՛ւս, եղբայր երկու մէծիս ունէ . . .

— Օ՛րարեւ Պետրոս ի՞նչպէս ես նայինք, կ'ըսեմ Պետրոսին խօսքը կարելով :

— Երկու մէծիս ունէի . . .

— Ունէիր... Յետոյ, կը սլատասխանեմ արկար ձայնով մը, ճառագայթող դէմքս ակրութեան փոխուելով:

— Յետոյ մէծիտ մըն ալ խանութիս մանր մունր բաները ծախելով ձեռք ձգեցի, ու եղաւ երեք մէ՛րս:

— Յետոյ, կ'ըսեմ, մօտենայով և ձեռքը սեղմելով, յետոյ, խօսքդ շուտ լիեցուր որ ըսելիք ունիմ:

— Յետոյ երեք մէծիտը գրպանելով գացի երեք զրչով փորս կշտացուցի:

— Աղէկ ըրիր:

— Սա՛ եօթանասուն փարանոց ծխախտար առի ըսաւ տուփը գրպանէն հանելով. որ անօթի գայլի մը պէս վրան յարձակեցանք:

— Աղէկ ըրիր, յետո՛յ:

— Քսան փարա ֆէսի կաղապար:

— Աղէկ ըրիր, յետո՛յ:

— Կօշիկներս ներկել տուի, և մօայ անծանօթ խանուս մը, սուրճ մը խմելու: Հոն ուղեցի բազդս փորձել, և մէկ քանի ձեռք թուղթ խաղալով, ունեցած ամբողջ դրամս վրայ տուի, նա, մինակ գրպանս սա երկու քնուցը մնաց ըսելով ժիլէին գրպանէն արծաթ երկու քնուց մը հանեց:

Իբր թէ՛ զլիսուս լախտի հարուած մը կերած ըլլայի. աչքերս սկսան մթազնիլ, ոտքերս կըթռտիլ և բերանս չէր բացուեր հայնոյելու համար:

Ընդհակառակը Մինաս ուրախութեամբան ճիշ մը արձակեց ըսելով, աղէկ, կամուրջի գրամը զըտանք, եկէք երեք հոգի Բերս անցնինք...:

Պահ մը մտածելէ յետոյ, արդէն որոշումը  
սոււած էինք :

Աշնան կծու գիշեր մը կ'ընէր, երկնքի վրայ  
ոչ մէկ աստղ կը փայլէր, հազիւ թէ Գուճ-գա-  
բուէն Մանուա փաշայի զլուխը հասած, աղտոտ  
անձրեւ մը ծայր սալ սկսաւ, ոչ հովանոց ունե-  
ինք, ոչ բայթօ, մաքէթներնուս օծիքները զէպի  
վեր դարձնելով, ձեռքերնիս գրպաննիս, գլուխ-  
նիս կրեաներու պէս զէպի ներս քաշած կը քա-  
լենք : Հիմա կամուրջին զլուխն ենք, անձրեւը  
անդատարափի փոխուած է, կոշիկներնիս կ'սկսի  
ջուր առնել :

— Քայեցէ՛ք աղաք կ'ըսեմ, կամուրջին հինգ  
հաս հինգ փարանոց տալով : Ղալաթիոյ կողմը  
չէնքի մը պատշգամին տակ կանգ կառնենք,  
ինքզինքնիս գոնէ քիչ մը անձրեւէն պտտապարե-  
լու համար : Անձրեւին թափը հազիւ թէ քիչ մը  
կարած՝ վարը . . . օձապտոյտ սլքակալէ յետոյ,  
Բերայի ճամբան ձեռք կառնենք :

— Տղաք, կամուրջին հինգ փարա պակաս  
տուի, եկէ՛ք քսան փարանոց թիւթիւնով հինգ  
փարայի թուղթ մը առնենք, դոնէ մէկ քանի մուխ  
կը քաշենք, որոշումը սոււած ենք, առած ծը-  
խախտանուս մէյ մէկ հաս սիկաս վառելով կըս-  
կըտինք Բերայի քովընաի փողոցները թեզերի :  
Գրպանս երկու փոքր բանալի, հայելի մը և պը-  
զինձէ երկու դրամներ ունիմ, որոնք կ'սկսիմ  
հնչեցնել, ընկերներս աչքերնին խոշոր խոշոր կը  
բանան :

— Ինչ, Գեղամ, իրա՞ւ կուճ կը բռնես :

— Զգեցէ՛թ եղբայր, ասկէ դուք չէ որ պիտի



խարութք, անանցմէ հրատարուողները ուրիշները պիտի ըլլան: Եւ վերջապէս խորհրդակցելու համար ազաքները գլուխս կը ժողվեմ:

Հիմա ինձի նայեցէ՛ք, ես մանիֆաթուրայի մեծ վաճառական մըն եմ, դու Մինաս, իմ ընդհանուր գործակատարս, իսկ դու Պետրոս որովհետեւ հազուա՞ չես մեր վաճառատանը սպասաւորն ես: Պետրոս զէժքը կը թթուեցնէ, «Յգբայր հէ՛մ իմ գրամովս Բերս պատիւնք հէ՛մ սպասաւոր ըլլամ»:

— Ու՛Ֆ ձգէ այսպիսի պարապ խոսքերը, ձգէ Գեղամը ինք զիտէ իր ընկիւթը, քու երկու գրուչդ ինչի՛ կը ծառայէր երբ Գեղամի պատրաստած յաւակագիծը չըլլար, կը պատասխանէ Մինաս խընդիրը կարգադրել ուղելով: Վերջապէս իրար համաղելով սան մը գուօր սփ կ'անենք:

Վարի պատուհանէն խոճած պառաւ մը գլուխը կէս մը գուրս հանելով գոմբլէ էֆէնտիմ, կը պատասխանէ՝ «Գրոյանիս առարկաներուն գրամաձեւ ձայները կը հանեմ»:

— Ես ձանձնէս բա՛ց, երեք տաճիկ են, բարս կը բռնեն կ'երեւայ, կը ձայնէ խոճածը ներսէն սպասաւորին: Գոմբլէ ըսելուն համար իրր թէ բարկացած մէկ ուրիշ գուռ մը կ'երթանք. «Տղաք ինքզինքնիդ տաճիկ ծախեցէ՛ք» կ'ըսեմ, դաս մըն ալ այդ տունէն առնելով: Վերջապէս այս երկրորդ տունէն ներս կը մտնենք: Շօղարը, սալօնա պուշուրուն՝ կ'ըսէ պարկեշտ կեցուածքով մարդ մը՝ «Ես առաջ կ'անցնիմ, քովէս Մինաս, իսկ Պետրոս ակնածանօք, ձեռքերը իրարու վրայ մեղի կը հետեւի»:

Խոշոր, կահաւորուած սենեակ մըն է թիկնաթոռներով, գորգերով հւայլն զարդարուած. կ'երթանք խորը խոշոր թիկնաթոռներուն վրայ թուրօրէն կը բազմինք, ու մէջակողի կար սեղանին վրայէն պատրաստ սիկառ մը առնելով, Անմիջապէս հուրի մը կուգայ ու վայրկենապէս սիկառս կը վառէ, ինքզինքս իրր թուրք ցոյց ապրով.

— Անուշդ ինչ է, կը հարցնեմ:

— Արշալոյս, կը պատասխանէ, անուշ քմծիւծաղով մը: — Իսկ Ձե՞րը:

— Քէճալ:

Եւ իրարու հետ խօսքի բռնուելով սահմանափակ կերպով կ'ըսեմ թէ ես Մայիլէն քեան թիւղ եմ, ան Արիֆը մեր սօսորոգաս գրագիրներէն մին եմիւս Պասրին ալ մեր ասն սպասաւորներէն մէկը:

Սենեակին մէջ իզական սեւը տակաւ կ'աճէր: Կ'սկսեմ ալ իմ կատարելիք դերիս: Եւ խօսքս ազջիկներէն մէկուն ուղղելով:

— Քու անուշդ Արմենուհի՞ է:

— Ոչ, ինչո՞ւ հարցուցիք:

— Գարագաշը քու սիրահարդ չէ՞:

— Ատանկ մէկը չեմ ճանչնար, սխալ ըլլալու է. կը պատասխանէ ազջիկը, զարմացած ժպտաով:

— Արիֆ, ով դիտցայ գիտե՞ս, կ'ըսեմ Մինասին, քիչ առաջ Լիւքսէնպուրկը սակիի մը պիւրրոս խաղացած տաննս, քովս գալով երկու մէծիտ փոխ ուղղին սիրահարը, ճիշտ ան ազջկան չի՞ նմանիր:

Իսկ Մինաս ալ իր կարգին, քովէս՝

— Հա՛, ուր է անցեալ օր Եանիին լու մը

խմած էինք տէ, կամաց մը քովէդ ծխախոտի  
արծաթ առփող վերցուց նէ:

— Այո՛, ինչ որ է:

Աղջիկը կամաց մը դրանք մօտ գանուող տաքի-  
քստ կնոջ դառնալով:

— Մայրիկ, առ տանիկները հարուստ կ'երե-  
ւան, ասանք չի փախցնէ ինք:

Ամբողջ կապոյտներ հագած աղջիկ մը առաջ  
գալով, անուշ ձայնով մը կ'ըսէ:

— Պէշեր, պիրա խմենք:

— Մինչեւ առաւօտ պիտի խմենք կը պա-  
տասխանեմ, գրողանիս առարկաները կամաց մը  
հնչեցնելով:

Հագիւ հինգ վայրկեան անցած, ահա գարե-  
ջուրի մէկ քանի շիշ ու գաւաթներ սեղանին վրայ  
չարուած էին:

Պետրոս, որ ծառայի մը կատարեալ ձեւերով  
անկիւնը անխօսուկ նստած էր, երբ գարեջուրի  
շիշերը կը անանէ, անհանգստութեան շարժում մը  
կ'ընէ՝ աչքերը խոշոր խոշոր բանալով, կարծես  
թէ չեր կրնար աթոռին վրայ հանգիստ նստիլ,  
գոյնը արդէն նետած էր, աչքերովը ինձ բան մը  
հառկցնել կ'ուզէր:

— Ինչ կ'ըլլատ կոր Պարի, կ'ըսեմ՝ զինքը  
սթափեցնելու դիտումով:

— Պէշ, կր պատասխանէ Պետրոս օտքի ելլե-  
լով, հիմա կառքերնից Կարսին Պարի տաջեւ ձեզի  
կ'սպասէ, քանի որ հօս պիտի նստիք այսպէս  
գուարճանաք, երթամ կառքը ճամբու դնեմ:

Խեղճ Պետրոս, եկած պիրաներու շիշերէն  
գարնուրած, կ'ուզէր պատրուակով մը կծիկը դնել:

— Թո՛ղ երթոյ մինչև առաւօտ սպասէ, կ'ըսեմ յանդիմանական շեշտով մը, ես ոսկին ինչո՞ւ համար կանխիկ տուի... :

Գարեջուրի գաւաթները լեցուած են արդէն, մէկ քանի ձեռքեր գաւաթները ինձ կ'երկարեն։

— Պէշտ, նախ իմ գաւաթս պիտի խմէք։

— Իմս աւելի փրփուտ է։

— Տեսէք իմս ինչպէս հաճելի է, ևն... :

Աղջիկները շուրջս կը ձեքձեքին։

Կամոց 'կամոց Արմենակի ալ դէմքի գոյնը կը նեւէր, և մտածկոտ երեւոյթով գալիք վտանգը կը նախաստեղծէր։

Քանի մը շիշեր արդէն պարսպուած էին, գլուխները քաւական տուքցած, կ'սկսիմ խօսքերուս մէջ աւելի համարձակ և պերճախօս ըլլալ։

Յանկարծ դռան ձայնը կը լսուի, մէկ քանի աղջիկներ դուրս կ'ելլեն և շուտ մըն ալ կը վերադաճնան և իրենց մօրը ուղղելով խօսքերնին հայերէն՝

— Չորս հոգի եկան, ներսի սենեակը վար գրինք։

— Սա մարդոցը քով բան մի ըսեր կարելի է կը բարկանան կը պատասխանէ մայրիկինին։

Նս բարկանալու դասն ալ առած էի։

— Ինչո՞ւ դուրս ելաք, կը հարցնեմ յանդիմանական և խրոխտ ձայնով մը։

— Դուռը զարկին, չորս հոգի էին, որովհետեւ դուք հոս էք՝ ճամբեցինք կը յարմարցնէ ճարպիկ աղջիկ մը։

— Նս... , կը պատասխանեմ ծանրօրէն,

Մեծն Աղեքսանդրի մը պէս յօնքերս պոստեցնելով, ևս շատ անուշ մարդ մըն եմ...

— Աղնիւ մարդը վրայէն յայտնի է, պէյս, կը պատասխանէ մայրը՝ խնդիր չի հանելու և անուշ տեղին կապելու համար:

— Բայց... — կը շարունակեմ — կը տեսնեմ որ սգեղ բան մը կ'ըլլայ ինձ հանդէպ՝ անմիջապէս կրակ կը կարիմ, բան մը ալ աչքիս չհրեւար, ստտանաները քովս մէկ մէկ զաճաճներ կ'ըլլան, աս գիշեր եկայ քանի մը շիշ պիրա խըմել, զուարճանալ, հինգ, տասը խնդիր չէ, զուք դեռ ինծի չէք ճանչնար: Ես, մէկ համով բակլավայի մը համար Բաբխարի Օրխանրալը, տասը սակին մէկէն ձգած եմ, իսկ վարը Շանք է պար մէկ ազատու գաւաթի մը համար քառասուն գաւաթ կոտորած եմ կ'ըսեմ, բոունցքս բարկութեամբ սեղանին զարնելով:

— Շատ իրաւացի էք, անուշիկ պէյս, կըսէ աղջիկ մը դէմքս շոյելով, կամքի աէր և օրէնքը սիրող մարդը այդպէս կ'ըլլայ: Իսկ միւս աղջիկները կ'սկսին դիւ բանրասել:

Բէք թացիկ կ'երեւայ կոր, նայեցէք որ շատ կոնծել չի տաք:

— Շատ բարձրերէն կը թռչի կոր ամա, գիտնալս կեղծասոր է:

— Սըւոր հաւկիթին մէկն է ըսէք ևն...

— Սուս եղէկ քա կ'ըլլաքի, հայերէն կը հասկնայ, նայեցէք որ մարդուն հետ անուշ երթաք: Մէկ քանի փարա աւելի բոցնելուդ նայեցէք:

Ինչ կը խօսիք հայերէն, թուրքերէն խօսե-

ցէք որ ես այ հասկնամ, կրտսեմ յանդիմանական  
ձեւով մը :

— Ոչինչ, կրտէ մայրը : Ձեր գովասանքը :  
Ձեզի պէս կարգ կանոն զխցոզ արնուականներ  
քիչ կը գանուին կրտսեմ :

— Ըստաթէն պիտա թէեւ չեմ սիրեր, բայց  
բերէք կը հրամայեմ, անկուտաթեան վախս,  
տաքցամ զլուխս սլորաներուն տակ թաղելով :

Քանի մը աղջիկ կ'երթան Պետրոս կը հար-  
ցուփորձեն, որ, ան այ իր կարգին խմամ մէկ  
քանի գաւաթներէն սիրտ ստամ կ'ըտէ « իրեն մը-  
նայ նէ բան մըն այ չէ, պատպան վարաներն է  
որ կուտէ կոր, կը պատասխանէ : Ամէն Բերա ե-  
լամ իրիկունը 10—15 սօկիէն պակաս չ'ուտեր,  
քիչ մը բնութիւնը աստի է, մինչև վերջը հար-  
անուչ երթալու է : Ձդէ որ կտարէ թափէ նէ այ,  
դարձեալ դրամները կը վճառէ : Ինձմէ իմացամ  
մի ըլլաք, շնորհքով փեսատուելիք հաւ մըն է : »

— Պատրի՛ ինչ կը խօսիք հող :

Պետրոս սաքի ելլելով :

— Ոչինչ տէր իմ, քու գովասանքդ կ'ընեն  
կը պատասխանէ, իրմէ չի յուսացուամ ճարպի-  
կութեամբ մը :

Իսկ Մինաս երեք օր անօթի մնացամ մարդու  
մը պէս, մէղէնները կը լափէ :

Յանկարծ տան սպասաւորը ներս մտնելով :

— Խանու՛մ, մի շիթէրիները չեն պէքլէէր կոր,  
բաթըրարէն խաֆանիս շիչմիչ եղաւ « գըղլար կէլ-  
մէյէճէքսէ պիզ կիտէճէյիս » ճուղապ տուին :

Վայրկենապէս բարկութեամբ ձեռքի գա-  
ւաթս սպասաորին կը նետեմ որ դրան գարնը-

ևելով ջարդ ու փշուր կ'ըլլայ: Եւ ոտքի ելլելով՝

— Հաշիւը տեսէք, ես, ալ հոս գործ չունիմ  
և բարկութեամբ պօռալով. ի՞նչ կեցերէք, հիմա  
ի՞նչ որ կերանք խմեցինք, չու՛տ առէ՛ք հաշիւը  
ալ վայրկեան մը չեմ կինար, ինձի այսպէս խա-  
րել չէ՛, սա անամօթներուն նայէ, ներսը յաճա-  
խորդ են պահեր:

Աղջիկները շուարած շուրջս կը բոլորուին:

— Ձէ պէյս, ձեզի համար չէ, ան մարդը  
խենթ է, դուք ձեր զուարճութեանը նայեցէք:  
Մենք ձեզի պէս հովարասա պէյ մը ուսկի՞ց կը  
զանենք եւս.:

Իսկ ես միշտ բարկութեամբ կը պօռամ.

— Ի՞նչ, ձեր այդ խօսած հայերէնը չի հաս-  
կըցա՞յ կը կարծէք: Ձիս կտպէք իսկ, դարձեալ  
չեմ կինար: Հիմա՞յ, այս վայրկեանիս, չու՛տ,  
առէ՛ք հաշիւը. ալ անկարելի է որ զիս համոզէք:

Մէկ քանի աղջիկներ իրարու կը փոփսան.

— Ըստեմ, չինդ սոկի առէք, ձգեցէք սա  
չոչորդը երկուս, հաւկիթ ըլլալը արդէն յայտնի  
եղաւ:

— Սա կտպիկին նայէ, գազանի պէս աչքերը  
բացեր է կ'ոսնայ:

Վերջապէս սենեակին դռան կը մօտենամ,  
քովի սենեակի մարդիկն ալ դուրս կ'ելլեն:

— Դու՛րս հանեցէք սա աչէրիՖնները, ասոնց  
փարաները ես պիտի տամ, մեկուն օձիքէն բռնե-  
լով. մէկը ուսիս բռունցք մը կ'իջեցնէ. . . .

— Յովհաննէ՛ս, փօլիս մը կանչէ, կը հրա-  
մայէ տիկինը, խնդրոյ՛ ծանրանալը տեսնելով:

— Մեզի՞ համար ոստիկան կը կանչէք ախ-  
իկն, կ'ըսեն միւս յաճախորդները:

— Չէ զաւակներս, քեզի համար չէ, սա հեռ-  
կելէնեբը զըխըմը ճախայով մը խմեցին, հիմա ալ  
կոխ հանեցին:

Յետոյ արկինը ինձ ժտենալով:

— Հաչիւնիդ երեք ու կէս ոսկի, միճիա մըն է:

— Երեք ու կէս փարս չեմ ի տար կը պօռամ:

Պետրոս վախէն, առիթէն օգուտ քաղելով  
կ'ուզէ կծիկը դնել:

— Օճաննէս դուռը գոցէ, պիտի փախչին,  
կը պօռայ արկինը:

Տեսնելով որ ալ փախչիլ անկարելի է, կըս-  
կըսիմ խննթ ու խելառ պօռալ կանչուըտակ:

Վերջապէս գիշերապահը դուրսէն իմանալով  
դուռը կը բազխէ: Ազջիկները շուտը կը ժող-  
ուին ու կ'ըսեն թէ ռՔանի մը պարկեշտ յաճա-  
խորդներ եկած էին, յետոյ երեք թուրքեր եկան,  
խմեցին խմեցին, հիմա ալ դրամը չի տուած կու-  
զեն փախչիլ:

Քիչ յետոյ ոստիկանը վրայ կը հասնի որ իր  
կարգին ազջիկներուն ըսածը, նոյնութեամբ գի-  
շերապահէն տեղեկութիւն կ'առնէ:

Ներսէն երբ ոստիկանը կը նշմարեմ

— Եկէ՛ք տղաք, ոստիկանը եկաւ, ոստիկա-  
նատուն երթանք, հոն ամէն բան կը պարզուի:

Եւ երեքս միասին դուրս կ'էլլենք:

— Տիկինն ալ թող բոն գայ կը ձայնէ ոս-  
տիկանը:

Մենք, երեք ընկեր ոստիկանատան ճամբան  
ձեռք կ'առնենք:

Ոստիկանը ճամբան խօսիլ ուղեկով՝

— Չեր մէջէն Քեմալը ո՛վ է, կը հարցնէ:



Ինքզինքս անմիջապէս կը ժողվեմ:

— Այո՛, էֆէնտիմ Քեմալն է որ զրամ չի վճարելու համար պօռուց կանչեց և ուզեց մեզի ծեծել:

Ոստիկանը կանգ առաւ,

— Չէ ճանրձ, ձեր մէջէն մալիէի պաշտօնեա Քեմալ մը կայ եղեր, որերնի՞դ էք:

— Ի՛նչ, Քէմալ... Ան տունը մնաց, արկինը անոր օծիկը չի թողուց որ, մենք Հայ ենք, դուք փոխանակ անոնք ձերբակալելու, մեզի կանչեցիք:

Եւ երեք բնկեր, սկսանք արագ արագ թըրքախառն հայերէն խօսիլ:


Ոստիկանը, բարկութեան ժեսը մը ըրաւ ըսելով:

— Եղբայր, դուք ի՛նչու եկաք, մենք աւելի անոնց պէտք ունինք, թող որ ձեր իֆաաէն ալ պիտի առնենք:

Ինչ որ է, դուք հիմա ոստիկանատուն գացէ՛ք, ես ալ երթամ զանոնք ձերբակալեմ...

... Եւ ոստիկանը օծիքնիս ձգեց:

A  
13891



[504.]

A  $\frac{I}{13891}$





